

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԵՐԵԱՆ

*Երկունքի վեց  
ճևած խոհեր*

2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Երկունքի մեջ ծնած խոհեր	3
Քահանայությունը՝ Քրիստոսի կեանքն է	5
Ս. Էջմիածինը՝ պատկերն է մեր հոգու	7
Ս. Էջմիածինը՝ Աստուածակերտ հրաշքը	9
Հայրենիքը իրականացուած գաղափարախօսութիւն է	10
Հայ Եկեղեցին մեր հաւատքի վկայութիւնն է	11
Մայրերը՝ աղօթքն են մեր կեանքին	13
Հաւատքի մեջ ծնած երիտասարդութիւն	15
Կեանքն ապրինք Աստուծոյ հետ	16
Կատարեալին ձգտինք	17
Նոր կեանք	18
Ներողամտութիւն	19
Աստուած՝ լուսաւոր ճանապարհորդը	20

## ԵՐԿՈՒՆՔԻ ՄԷՋ ԾՆԱԾ ԽՈՇԵՐ

Մարտ, Ապրիլ 2020 թուականին ողջ աշխարհը անսխալնթաց փորձութեան մը բովէն անցուց ինքզինքը: Մարդիկ առհասարակ կամայ թէ ակամայ հաշտուեցան իրավիճակի հետ այն մտահոգութեամբ, որ վտանգ կը սպառնար, թէ վարակը շատ արագ տարածում գտնէր եւ անհաշիւ կեանքեր իլլէր: Վստահաբար, շատ-շատերու համար ստեղծուած իրավիճակի պարտադրանքի հետեւանքով, առանձնացումը եղաւ առիթ մը մեր բոլորի ուշադրութիւնը բեւեռելու համար Աստուծոյ վրայ եւ խոկումի առաջնորդող շրջան մը որդեգրելու մեր ապրած կեանքի ընթացքի մասին:

Պատեհ այս առիթէն օգտուելով՝ ինչպէս շատերը, ես եւս ունեցայ իմ աղօթքի ու խոկումի պահերը, որոնք իրօք հոգեւոր ուժականութիւն ներշնչեցին ինձ, եւ որոնց առաջնորդութեամբ նաեւ բաւական ժամանակ տրամադրեցի եւ տակաւին նոյն ձեւով կը շարունակեմ օրերը լեցնել, խոհերս գրութեամբ եւ կամ առցանց բաժնետնելու իմ ժողովուրդի հետ: Մէկ խօսքով՝ այս օրերը ինձ համար դարձան հոգիս ներքին ծալքերը բանալու եւ աւելի ու աւելի Աստուծոյ մօտենալու, քանզի ճշմարիտ խաղաղութիւնը կը գտնեն Աստուծոյ ձեռքերուն մէջ:

Այս փոքրիկ գրքոյկին առիթ տուող պատճառը իմ քարոզգրքիս ԺԵ. Հատորին համար գրուած նախաբանն է, որ պատրաստած է Հայկ Մադոյեանը՝ այնտեղ ի մի բերելով իմ քարոզներէն քաղուած մտորումներ: Առաջին հերթին իմ երախտիքը Հայկին, որ հակառակ այս օրերուն իր կրած ծանր տառապանքին՝ իր մօր մահուան տխուր պատճառով եւ ի մասնաւորի չկարենալ մասնակցելու համար անոր յուղարկաւորութեանը օրերու պայմաններու բերումով, շարունակեց խմբագրել քարոզգիրքս եւ իր նախաբանին մէջ արձանագրեց մտորումներ իմ քարոզներէս, զորս կարդալէ յետոյ մտածումը

ունեցայ՝ առնել իւրաքանչիւրը մէկ առ մէկ եւ ընթերցել ու խորացնել զանոնք:

Սոյն գրքոյկը վերնագրեցի «Երկունքի մէջ ծնած խոհեր», որովհետեւ ճշմարտապէս դժուարին ու փորձութեան օրեր կ'ապրինք, երբ ողջ աշխարհը ահ ու սարսափի մէջ է coronavirus-ի արագ տարածումովը: Մարդկային մեր տկարութիւնը բնականօրէն ծնունդ կու տայ վախին, յուսալքութեան եւ անորոշութեան, բայց փառք Աստուծոյ, գէթ առ այսօր տեղի չտուինք, որ մեր մէջ ապրինք տկարութիւն եւ ամբողջութեամբ ապաւինեցանք Աստուծոյ, եւ Աստուած կ'առաջնորդէ մեր կեանքը:

Ուրեմն կը հրաւիրենք հայ հաւատացեալը հաղորդ դառնալու մեր խոհերուն, որոնք կ'արտացոլեն մեր հաւատքի կեանքը:

*Ապրիլ 4, 2020*

## ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵԱՆՔՆ Է

*«Քահանայության կոչումը մենք մեր հոգեւոր կեանքին մէջ զգացած ենք ու ապրած դեռեւս ի մանկութենէ եւ այն փայփայած, որպէսզի ուռճանար մեր մէջ եւ որպէսզի առաւելագոյնս իմաստաւորէինք մեր ծառայութիւնը Աստուծոյ փառքին համար եւ ի խնդիր Հայց. Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ եւ հաւատացելոց հոգեւոր կեանքի զարգացման»:*

Ի՞նչ է քահանայութիւնը: Անթիւ անհամար բացատրութիւններ ու սահմանումներ են տրուած քահանայութեան խորհուրդի մասին: Մենք եւս մեր հերթին խնարհաբար փորձած ենք իւրովի ըմբռնել քահանայութիւնը եւ արձանագրած մեր մտածումները զանազան առիթներով:

Քահանայութիւնը Քրիստոսի կեանքն է, որն ապրելու կոչումը կը զգանք եւ կը պատասխանենք այդ կոչումին, որպէսզի փորձենք հետեւող ըլլալ քահանայապետին՝ Քրիստոսի կեանքի օրինակին:

Արդարեւ, ի մանկութենէ մեր մտածումներն ու հոգին սեւեռուած են քահանայութեան խորհուրդին վրայ՝ այն մարմնաւորուած տեսնելով քահանայից կեանքին մէջ: Եւ հետզհետէ քահանայանալու փափաքը փայփայած ենք մեր հոգու մէջ եւ հասած մեր բարի նպատակին՝ դառնալու համար հոգեւորական եւ Աստուածատուր մեր կեանքը լեցնելու բոլորանուէր ծառայութեամբ: Անկասկած, ինչպէս բոլորը, մենք ալ ունեցած ենք տկարութեան պահեր, բայց օրհնուած կը զգանք, որ Ամենակարողն Աստուած մշտապէս իջած է մեր հոգու մէջ, ինչպէս նաեւ մեր հայրերը հոգեւոր մեր կեանքը հարստացուցած են իրենց օրինակելի ու բարի կենցաղով, ինչպէս նաեւ հոգեւոր թէ աշխարհիկ սպասաւորներ, որոնք եւ արթնութեան հրաւեր են տուած մեզ՝ շարունակել քայլելու համար Աստուծոյ գծած ճանապարհէն:

Այսօր, մեր կեանքին մէջ հասած ենք հանգրուանի մը, որ մինչեւ մեր հոգու խորքը կը զգանք Աստուծոյ ներկայութիւնը եւ այն կ'ապրինք ուրախութեամբ, հոգեկան ներքին մխիթարութեամբ:

Տէր իմ Աստուած, առաջնորդէ քայլերս մշտապէս դէպի քեզ: Քանզի ինչքա՛ն քայլերս դէպի քեզ կ'ուղղեմ, այնքան լոյսը քո աստուածային կը պայծառացնէ միտքս ու հոգիս, ու մանաւանդ իմ մէջ կը բիւրեղանայ խորհուրդը քահանայութեան:

## Ս. ԷԶՄԻԱԾԻՆԸ ՊԱՏԿԵՐՆ Է ՄԵՐ ՀՈԳՈՒ

*«Սրբություն Սրբոց Ս. Էջմիածինը արմատն է մեր կեանքին ու պատմութեան եւ դէպի երկինք բարձրացող ու դէպի յաւերժություն առաջնորդող աստուածահիմն կամուրջը: Ս. Էջմիածինը հայրենի հողին հետ միաձոյլ դարձած անժամանակին մէջ ապրող յաւերժությունն է»:*

Ս. Էջմիածինը հայ քրիստոնեայի հաւատքին ծննդավայրն է, մեր ողջ պատմութեան ընթացքին ան եղած է Մայրը մեր զաւակաց համար, որ հոգեւոր սննդատուն ըլլալով հանդերձ՝ տոկաց ժամանակներու հոլովոյթին մէջէն եկած բոլոր տեսակի հարուածներուն: Ս. Էջմիածնի խորհուրդին առջեւ հայ քրիստոնեան իր բովանդակ կեանքով խոնարհած պիտի մնայ, քանզի անոր խորհուրդը իր մէջ կ'ամփոփէ ազգի մը պատմութիւնը, եկեղեցւոյ հայրերուն հաւատքի կեանքը, սուրբերուն աղօթքը: Աշխարհացրիւ հայութիւնը Հայաստանէն դուրս աղօթքի շատ օջախներ է ունեցած, մտքի դարբնոցներ, վանքեր ու եկեղեցիներ, որոնք այսօր միայն պատմութիւն են: Ս. Էջմիածինը, փառք Աստուծոյ, պիտի մնայ մնայունը: Իրօք արմատն է Ս. Էջմիածինը մեր կեանքին ու պատմութեան: Անոր քարերուն մէջ է խտացած մեր ողջ պատմութեան ձայնը, արեան կանչը մեր հերոսներուն, եւ ահա այդ իսկ պատճառով դէպի երկինք բարձրացող ու դէպի յաւերժություն առաջնորդող աստուածային կամուրջն է Ս. Էջմիածինը:

Մեր Ս. եկեղեցւոյ հայրերը իրենց մաղթանքներու ու աղօթքներու մէջ հայ քրիստոնեային հաւատքի կեանքը առաջնորդած են դէպի Ս. Էջմիածին, քանզի անդ է իջած երկինքէն Աստուածորդին: Այդ համոզումով կատարած են այսպիսի հաստատում.

*«Ս. Էջմիածինը հայրենի հողին հետ միաձոյլ դարձած անժամանակին մէջ ապրող յաւերժությունն է»:*

Էջմիածին – անուն նուիրական, անջնելի արձագանք, քանզի դարերու բովէն հասած անթիւ հոգիներու ծալքերուն մէջ անդադրում աղօթք եւ դարձած, որուն մէջ կը տեսնեն պատկերը Աստուծոյ: Ու նոյն պատկերը կը դարձնեն քաղցրատեսիլ պատկերը հոգիի: Հայ մարդը պիտի դառնայ մանրակերտը Ս. Էջմիածնի:



## Ս. ԷԶՄԻԱԾԻՆԸ՝ ԱՍՏՈՒԱԾԱԿԵՐՏ ՇՐԱՇՔԸ

*«Ս. Էջմիածինը մեր կեանքը ապահովագրող աստուածային ներկայություն կը շարունակե մնա»:*

Այս է ճշմարտությունը. Ս. Էջմիածինը աստուածային ներկայություն է: Ս. Էջմիածինը հայրենի հողի վրայ հաստատուած եւ հայրենի հողի հետ միաձոյլ դարձած մէկ ամբողջություն է: Ս. Էջմիածնով է նաեւ ապահովագրուած մեր կեանքը:

Մեր սպասումն է, որ ծնողներ ու ազգն ամբողջ իրենց մտասեւեռումի կեդրոնը պէտք է դարձնեն Ս. Էջմիածինը: Ազգեր ու ժողովուրդներ իրենց գոյութիւնը կ'արժեւորեն սրբութիւն-սրբոցներով: Մեր ազգի կեանքին մէջ Ս. Էջմիածինը բոլոր ժամանակներու աստուածակերտ հրաշքն է: Ով կը թերագնահատէ այս բացարձակ ճշմարտութիւնը, մեղք կը գործէ եւ աւելին:

Բազում առիթներով մենք խօսած ենք Ս. Էջմիածնի դերի ու առաքելութեան մասին: Այն բոլորը, ինչ անհրաժեշտ էր, որ մենք ունենայինք՝ դառնալու համար ուրոյն նկարագրի տէր ժողովուրդ, այդ բոլորը գտած ենք Ս. Էջմիածնի խորհուրդին մէջ: Հաւատքի գիտակցութիւնը, հայրենասիրական տեսիլքը, մշակոյթ հասկացողութիւնը, քաջութիւնն ու նոր հեռանկարներու կենսունակութիւնը, այս բոլորին ծնունդ տուող մայրն է եղած Ս. Էջմիածինը: Մենք պիտի ուզէինք ըսել, որ այս բոլորը անկրկնելի հրաշքներ են եւ անոնց հաւասարը չի կրնար ըլլալ:

Մեզի կը մնայ որպէս Հայց. Եկեղեցւոյ զաւակներ, ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի, նայիլ Ս. Էջմիածնին եւ անոր լոյսին մէջ գտնել դէպի յաւերժութիւն տանող ճանապարհը:

## ՀԱՅՐԵՆԻՔԸ ԻՐԱԿԱՆԱՑՈՒԱԾ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ Է

*«Ի մասնաւորի Սփիւռքի մէջ ապրող մեր ժողովուրդի զաւակաց համար Հայրենիքը գրաւականն է մեր կեանքին»:*

Երբ կը նայինք այսօրուայ աշխարհին, որոշապէս աւելի կը շեշտուի կարեւորութիւնը հայրենիքի գաղափարին: Նոյնն է պարագան նաեւ հայերուս համար: Դարերով մեր նախնիք կեանքն արժեւորած են հայրենիքի տեսլականով եւ այն փոխանցած սերունդներուն: Ի մասնաւորի այն իր կրկնակի իմաստն է ստացած Սփիւռք ապրող մեր ժողովուրդի զաւակաց համար: Այսօր առաւել եւս, երբ կը տեսնենք, որ globalization-ը (համաշխարհայնացումը) փաստօրէն անիրականանալի կը դառնայ, ապա մենք առաւել եւս մեր պարտքը կը համարենք գորգորպալ հայրենիքի տեսլականը, որով կը հասկնանք, որ հայրենիքը իր ներկայութեամբ յաւերժ պիտի մնայ գրաւականը մեր կեանքին:

Հայրենիքը վերացականութիւն չէ: Հայրենիքը իրականացած գաղափարախօսութիւն է, որ նպատակ կու տայ այսօր մեր կեանքին եւ անտարակոյս գալիք սերունդներուն: Հայրենիքի տեսիլքն է, որ կ'ապահովագրէ մեր ներկայութիւնը աշխարհի ժողովուրդներու ընտանիքին մէջ: Մեր հայրենիքը, ինչպէս այլոց պարագային, ունի իր ուրոյն պատմութիւնն ու նկարագիրը:

Եւ ճշմարիտ ու տրամաբանական բացատրութիւն հայրենիքին բոլորիս համար յստակ է. իւրաքանչիւր ժողովուրդ կը ներկայանայ իւրովի նկարագրով:

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵՐ ՀԱԻԱՏՔԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆ Է

*«Մենք խոր համոզումով կ'ուզենք ընդգծել, որ Հայց. եկեղեցին պիտի ըլլայ առանցքը եւ՝ Հայաստանի, եւ՝ Սփիւռքի իրականութեան»:*

Երբ այս տողերը կ'արձանագրենք, կը մտաբերենք այն խորհրդածութիւնը, զորս մեզի է փոխանցած Ս. Էջմիածնի լոյս խորանէն ծնած տեսլապաշտ հոգեւորականը՝ Գարեգին Յովսէփեանց կաթողիկոսը:

«Աստուծոյ շնորհած ամենամեծ պարգեւը մեր ժողովուրդին Հայց. եկեղեցին է, որի համար մեր հայրերը այնքա՛ն արիւն են թափած, զոհողութիւններ կատարած: Նա օրհնութիւն է եղել մեր անցեալի մէջ, մեր ազգային ու հոգեւոր կեանքի պահպանութեանը մէջ դարերի ընթացքում: Այժմ նաեւ իւր կարեւոր դերն ունի կատարելու՝ հայ կրօնն ու աստուածապաշտութիւնը Սփիւռքի հայութեան մէջ վառ պահելու, մեր լեզուի, հայ հոգու եւ աւանդութեան պահապան հրեշտակ լինելու:

«Երախտապարտ լինենք եւ խորապէս գիտակից Աստուծոյ այդ շնորհին համար: Երախտապարտ լինենք գիտակցութեամբ դէպի մեր հոգեւոր մայրը, որ Հայց. Առաքելական եկեղեցին է: Նա մերն է, մեր ազգային եկեղեցին եւ մեր ազգային ամենամեծ ստեղծագործութիւնը, ամենամեծ ժառանգութիւնը մեր նախնեաց թողած: Նորա պահպանութիւնը, կարգաւորութիւնը, յառաջադիմութիւնը Սփիւռքի հայութեան պահպանութեան երաշխիքն է»:

Արդարեւ, երանեալ Հայրապետի այս բառերը կը կարդանք երկիւղած սրտով: Ազգի կեանքին մէջ Յովսէփեան կաթողիկոս իր կեանքով դարձաւ խորհրդանիշը Ս. Էջմիածնի, անշէջ ոգու կրող Սարդարապատի հերոսամարտի եւ յաւերժութեան տեսլականով հարուստ հոգեւորականը: Սերունդներ դժուար թէ կարողանան

նման դրոշմ թողուլ Հայց. Եկեղեցւոյ պատմութեան մէջ նոյն տարողութեամբ:

Հայց. Եկեղեցին ազգերու պատմութեան եւ եկեղեցիներու պատմութեան մէջ ունի իր ուրոյն տեղը եւ՝ իր հաւատքի վկայութեամբ, եւ՝ իր պատմութեամբ ու աստուածաբանութեամբ: Երէկ, այսօր եւ յաւիտեան Հայց. Առաքելական եկեղեցին պիտի շարունակէ ըլլալ առանցքը հայ ժողովուրդի լինելիութեան:

## ՄԱՅՐԵՐԸ՝ ԱՂՕԹՔՆ ԵՆ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ

*«Միրելի մայրեր, այսօր Աստուածամօր տօնն է, եւ մենք բնականօրէն կը տօնախմբենք անոր յիշատակը: Այսօր կը տօնախմբենք նաեւ բոլոր մայրերու պատարագումը, որովհետեւ ինչպէս Աստուածամայրը պատանի Յիսուսը առաջնորդեց տաճար, այդպէս ալ կը սպասենք, որ մեր մայրերը իրենց զաւակները առաջնորդեն եկեղեցի»:*

Մայրերը բոլորիս կեանքին մէջ անփոխարինելի են: Յաճախ կը մտածեմ, թէ ինչքա՞ն սեր է խտացած իրենց սրտերուն մէջ, որուն մէջ մենք կը զգանք Աստուծոյ սիրոյ արտայայտութիւնը: Որոշապէս բոլոր մայրերու համար ալ Աստուածամայրը մտատիպարն է, եւ իւրաքանչիւր տան մէջ լոյսի ու հաւատքի սիւնն են մայրերը: Հերոսներ ու սուրբեր ծնողներն են մայրերը, ովքեր միշտ պատրաստ են իրենց տեսիլքին մէջ խեղդելու իրենց զաւակաց մարտիրոսութիւնը՝ յանուն սրբութեան ու ճշմարտութեան, յանուն հայրենիքի ու ազգի սրբազան աւանդութեանց:

Երբ այս տողերը թուղթին կը յանձնենք, կ'ուզենք բարձրաձայն յայտարարել եւ պատգամել.

Միրելի հայ մայրեր, նոր ժամանակներու մէջ կ'ապրինք եւ պարտ էք հազարապատկել ձեր պատարագումը յանուն ձեր զաւակաց հոգեւոր ու ազգային դաստիարակութեանը: Մի՛ համակերպուէք ժամանակի նորածեւութեանց եւ մի՛ տեղի տուէք քմահաճոյ նորաստեղծ երեւոյթներու: Եղէք ջատագովը մեր հայրերու հաւատքի կեանքին եւ դաստիարակէք ձեր զաւակները աղօթքի կեանքին ծարաւը յագեցնելու գիտակցութեամբ: Որովհետեւ ամէն հայ մայր իր կեանքով եկեղեցւոյ առաքելութիւնը իրականացնելու ազնիւ պարտականութիւնը տրուած ունի Աստուծոյ կողմէ:

Ի գուր չէ, որ շուրջ 40 տարիների առաջ հոգելոյս Վազգէն Ա. Վեհափառը երբ կը խորհրդածէր մայրութեան մասին, հետեւեալը արձանագրեց.

«Բոլոր մայրերը սուրբ են»:

## ՀԱԿԱՏՔԻ ՄԷՋ ԾՆԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

*«Երիտասարդության եւ եկեղեցւոյ կապը պէտք է որ հոգեւոր, գիտակցական եւ իմացական հիմքի վրայ ըլլայ, այլ ո՛չ զգացական կամ աւանդութեան ոյժի: Այսպէս միայն կրնանք պատրաստել վաղուան առաջնորդները, նախանձախնդիր պաշտպանները մեր ազգային ու հոգեւոր արժէքներուն»:*

Երիտասարդութիւնը եկեղեցւոյ ու առհասարակ համայնքի կեանքին մէջ բաբախող սիրտն է, որ իր վրայ կը վերցնէ հաւատքի գիտակցութիւնը՝ շարունակելու համար ե՛ւ եկեղեցւոյ առաքելութիւնը, ե՛ւ համայնքի առաջնորդութիւնը: Մեր բովանդակ ծառայութեան ընթացքին երբեւէ չենք թերագնահատած դերն ու պաշտօնը, եւ ի մասնաւորի իմաստութիւնը մեր երիտասարդութեան: Բայց մեծերը պարտ են տեսնել անոնց մէջ թէւ անտեսանելի, բայց առկայ ոգին ու հաւատքի ուժը եւ երբէք չզրկել երիտասարդութիւնը մասնակցութենէ: Հոգեւոր սպասաւորութեան մէջ շուրջ քառասուն տարիներու մեր ծառայութեան փորձով հաստատապէս կարող ենք ըսել, որ երիտասարդութիւնը կը սիրէ իր եկեղեցին, կը գնահատէ իր եկեղեցին, գիտակից է հոգեւոր ու բարոյական արժէքներու դերին ու մանաւանդ նախանձախնդիր ոգով պատրաստ է դառնալու պաշտպանը մեր նախնեաց հաւատքին:

Այսօր աւելի քան բոլոր ժամանակները առանց վիատելու լայն բանանք մեր Ս. եկեղեցւոյ դռները եւ արտօսենք, որ երիտասարդները յանձնառու ըլլան իրենց իմաստութեամբ ու հաւատքի գործերով առաջնորդելու եկեղեցին ու համայնքը: Այս ընթացքին զօրավիզ ըլլանք երիտասարդութեան, հաւատանք իրենց տեսիլքին եւ միշտ իրենց կողքին մնանք:

## ԿԵԱՆՔՆ ԱՊՐԻՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ

*«Երբ մեր շուրջը կը նայինք, մեզի համար յստակ կը դառնայ, որ անհատներ կամ հաւաքականութիւններ, ովքեր պարպուած են Աստուծոյ խօսքէն, իրենց կեանքը կ'ապրին աննպատակ եւ յաճախ կորսնցուցած իրենց մէջ ճշմարիտ ուրախութիւնը»:*

Աստուծոյ պիտի լեցնենք մեր միտքը, հոգին ու սիրտը, որովհետեւ այլապէս ուղեկորոյս մեր քայլերը կը տանին մեզ դէպի խաւար: Եւ արդարեւ այսօրուայ աշխարհի կեանքի մէջ մեծ է թիւը այն մարդկանց, ովքեր հոգեւոր իմաստով բոպիկ են, անհաղորդ Աստուծոյ խօսքին, եւ աւելին՝ շա՛տ հեռու Աստուծմէ:

Իրօք ճշմարիտ է այն ուրախութիւնը, երբ մեր կեանքը լեցուն է Աստուծոյ խօսքով: Վերջինս կը բացատրէ այն ճշմարտութիւնը, որ ոչ միայն Աստուծոյ երկիւղը կ'ապրինք, այլեւ ամբողջութեամբ կ'ապաւինինք Աստուծոյ:

Աստուծոյ հետ ապրուած կեանքը չի կրնար աննպատակ ըլլալ: Աստուած Ինք կ'առաջնորդէ մեզ: Ինչքան փափաքելի պիտի ըլլայ, որ ծնողները իրենց զաւակներու աճման տարիներուն անոնց հոգիները մշակեն Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ: Եւ երբ մանուկը կը մեծնայ Աստուծոյ սիրով, ապա անոր կեանքի ճանապարհը լուսաւոր է: Եւ երբ մանուկներու կեանքը կ'առաջնորդուի Աստուծոյ խօսքով, ապա ազգի կեանքը լուսաւոր է:

Ժամանակն է, որ ամբողջ ազգով հազարապատկենք մեր ջանքերը սերունդներու հոգեւոր դաստիարակութեան առաքելութեան վրայ: Մանուկներու շրթներով արտասանուած աղօթքը արագահաս կը հասնի Աստուծոյ: Մանուկներու հոգիներուն մէջ դրուած սերը ազգի ու հայրենիքին հանդէպ անկողոպտելի է: Մէկ խօսքով՝ խոնարհինք մեր զաւակաց առջեւ, որպէսզի չըլլայ այնպէս, որ պարպուած մնան Աստուծոյ խօսքէն:



## ԿԱՏԱՐԵԱԼԻՆ ՁԳՏԻՆՔ

*«Հոգեւոր թէ աշխարհիկ կեանքէն ներս մենք այլեւս պիտի մերժենք միջակութիւններ եւ պիտի ձգտինք ունենալ կատարեալ մասնագէտներ բոլոր բնագաւառներէ ներս»:*

Կատարեալին ձգտումը առաքինութիւն է: Ազգերու մեծութիւնը իրենց թիւով չէ, որ կը պայմանաւորուի, այլ լել՝ իրենց մէջ ծնած տաղանդներով: Եւ ինչպէս աշխարհիկ բնագաւառներուն մէջ մեզ պետք են կատարեալ մասնագէտներ, ապա հոգեւորականութիւնը եւս պիտի ունենայ նոյն ձգտումը՝ կատարեալի տեսիլքը: Այո, քահանայութիւնը կոչում մըն է, բայց չէ՞ որ այդ կը պարտաւորեցնէ մեզ ունենալու առաւել պատրաստուածութիւն:

Մարդուն կեանքը ընդհանրապէս պիտի ըլլայ կատարեալին ձգտող ճանապարհորդութիւն մը: Իբօք պետք է մերժել միջակութիւնը, այն քաջ համոզումով, որ Աստուծոյ ստեղծագործութեան մէջ մարդը կատարելատիպն է: Ուրեմն սպասում մը կայ մեզմէ: Պետք է արդարացնել տրուած կեանքը եւ պատահականօրէն չսպրել այն: Սա ծանր, բայց քաղցր պատասխանատուութիւն է: Երբ կատարեալին ձգտումով կ'սպրինք կեանքը, ապա շատ աւելի մօտ ենք կանգնած Աստուծոյ: Այլ խօսքով՝ կատարեալին տեսիլքով մենք կը դառնանք նաեւ Քրիստոսի առաքեալները: Չէ՞ որ Աստուածորդին նոյնը քարոզեց. «Եղէք կատարեալ, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը»:

## ՆՈՐ ԿԵԱՆՔ

*«Մարդուն եւ ի մասնաւորի Քրիստոնեայի մեծագոյն յաղթանակը կը կայանայ նոր կեանքին մէջ»:*

Նոր կեանք: Ամեն առաւօտ, երբ մեր աչքերը կը բանանք, նոր է կեանքը: Նոր է կեանքը ի մասնաւորի, երբ ի Քրիստոս է այդ կեանքը: Քրիստոսով է պայմանաւորուած առաւօտը մեր կեանքին: Քրիստոսով ապրուած կեանքն իր մէջ կը կրէ յաղթանակած կեանք: Մարդն անկատար է առանց Քրիստոսի: Ինչքա՛ն դիպուկ է Առաքեալին խօսքը. «Չի ինձ կեանք Քրիստոս է»:

Աշխարհի կեանքին մէջ, եթէ մարդը իր մէջ կորսնցնէ նորին գիտակցութիւնը՝ տեսիլքը, ապա այդ կեանքը պիտի նմանի այն խոտին, որ պիտի աճի ու չորնայ եւ փոշիանալով յօդս ցնդի: Արդ, կը մերժենք մեր կեանքը նմանեցնել խոտին: Կեանքը Աստուծմէ մասնիկ մըն է մեր մէջ, եւ պիտի գուրգուրանք տրուածին եւ այն յաւերժօրէն նորոգենք ու ճոխացնենք:

Նոր կեանք: Բոլորս ունենանք այս զգացողութիւնը: Որովհետեւ կեանքէն դուրս ինչ որ կայ եւ ինչ որ կը տեսնենք՝ կը դառնայ նոր միայն մարդով: Ուրեմն նոր աշխարհ, նոր ժամանակ: Այս բոլորին նորոգութիւնը պայմանաւորուած է մարդուն մէջ ծնունդ առած նոր մարդով:

Միշտ պիտի յիշենք Քրիստոսի խօսքը. «Ես եկի, զի առաւել կեանս ունիցիք»: Ուրեմն կեանքն ապրինք այնպիսի եղանակով մը, որ իր մէջ ծնի կեանքեր:

## ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ

*«Եթե մարդը կ'ուզե ինքզինք ազատել գերութենէ, ապա պիտի կարողանայ ներողամտութեամբ ապրի, որպէսզի ճշմարտապէս ապրի քրիստոնէայի կեանքով»:*

Ներողամտութիւնը քրիստոնէութիւնը իր մէջ խտացուցած առաքինութիւնն է: Անառակին հայրը մեզ հաղորդեց այս ճշմարտութիւնը: Եւ երեւի քրիստոնէութիւնը կը յատկանշուի ներողամտութեան վարդապետութեամբ: Չէ՞ որ նաեւ Քրիստոս աշխարհ եկաւ որպէս բացայայտումը Աստուծոյ անսահման սիրոյն, որպէսզի մարդուն բաշխէր վերստին կենդանութեան շունչը: Այլ խօսքով՝ Քրիստոս որպէս երկրորդ Ադամ մարդուն պիտի բարձրացնէր իր առաջին պատուին:

Երանի թէ աշխարհի մարդիկ ներողամտութիւնը ընդունին որպէս հրաշագործ դեղ ու բալասան մեր մարդկային խոցուած սրտերուն: Քանզի երբ ներել չգիտենք, ապա խաղաղ չէ մեր հոգին: Մարդը իր հոգիին վրայէն պիտի թօթափէ «փոշին»՝ աններող ոգին, որպէսզի ապրի ներելու խաղաղութիւնը:

Քրիստոսի կեանքին ճանապարհը մեզ կը թելադրէ ներողամտութեամբ ապրելու ոգին: Ուրեմն ազատուինք գերութենէ՝ որդեգրելու կեանքն ապրելու Աստուծոյ կամքին համաձայն, Քրիստոսի կեանքին հետեւողականութեամբ:

Ժամանակի մէջ ծնած են ու ապրած ճշմարիտ քրիստոնէաներ, ովքեր իրօք ապրած են ներողամտութեան ոգով: Այդպիսիք ոչ միայն իրենք են ապրած ներքին հոգեւոր անդորրը, այլեւ դիմացինը փաստօրէն հրաւիրած են բարութեան:

## ԱՍՏՈՒԾ՝ ԼՈՒՍԱԲՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

*«Աստուծոյ հետ ապրուած կեանքը լուսաւոր է եւ խաղաղ»:*

*«Ձեր մէջ կրէք Աստուծոյ ներկայութիւնը: Ձեր խօսքը թող ըլլայ Աստուծոյ խօսքը եւ թող ձեր կեանքին ճանապարհը նմանի Քրիստոսի կեանքին»:*

Երբ այս տողերը թուղթին կը յանձնեն, ներքին անբացատրելի ուրախութիւն մը կը պատէ հոգիս: Անշուշտ տկար ենք նաեւ մենք որպէս մարդ արարած, բայց սերն Աստուծոյ հանդէպ առկայ է մեր մէջ: Աստուծոյ հետ լուսաւոր է մեր կեանքը:

Իւրաքանչիւր օր, երբ աղօթքով է առաջնորդուած, ապա որոշապէս կը զգանք Աստուծոյ ներկայութիւնը: Քրիստոնեայի մեր կոչումը պիտի ամեն օր նորոգել մեր մէջ առաքելութեան խորհուրդով՝ քարոզելու Աստուծոյ խօսքը, եւ մեր կեանքի ճանապարհը նմանեցնել Քրիստոսի կեանքին:

Տէր Աստուած, ամենակարող, առատացու՛ր իմ մէջ Քու սերն ու օրհնութիւնները եւ զօրացու՛ր իմ մէջ կոչումը՝ ծառայելու քեզ յաւիտեան: